ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 69

## ՆԵԼԼԻ ՄԱՆԱՎՋՅԱՆԻՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջների, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջների, հիմք ընդունելով քաղաքացու դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Նելլի Անդրանիկի Մանավջյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-3 այգետարածք 2-րդ թաղամաս թիվ 20 հասցեում գտնվող 07-054-0208-0005 կադաստրային ծածկագրով բնակելի կառուցապատման հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք (նախագծման թույլտվություն)՝ բնակելի տան և պարիսպի կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2021 թ. մայիսի 10
գ.Պտղնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 70

## ՍՅՈՒԶԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՆԴՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջների, հիմք ընդունելով քաղաքացու դիմումը և լիցենզավորված ճարտարապետի կողմից գծված նախագծի առկայությունը՝ ***որոշում եմ.***

1. Սյուզի Հրաչյայի Կարապետյանին տալ սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-3 այգեզանգված 4-րդ թաղամաս թիվ 15 (կադաստրային ծածկագիր 07-054-0209-0005, սեփականության վկայական N 09032021-07-0042) հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում բնակելի տան և պարսպի կառուցման աշխատանքների շինարարության թույլտվություն և սեփականության վկայականում նշված 07-054-0209-0005-001, 07-054-0209-0005-002 և 07-054-0209-0005-004 կադաստրային ծածկագրերով շինությունների քանդման թույլտվություն:
2. Հանձնարարել Սյուզի Հրաչյայի Կարապետյանին շինարարական աշխատանքներն իրականացնել քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան:
3. Շինարարական աշխատանքները սկսել տեղական տուրքը վճարելուց հետո:
4. Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ եռօրյա ժամկետում համայնքապետարան ներկայացնել տեղեկանք Ձև N 5-ը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2021 թ. մայիսի 10
գ.Պտղնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 71

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Ցոլիկ Ազնիվի Սահակյանի դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի 9-րդ փողոց թիվ 13 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում (կոդ 07-054-0004-0027) 2016 թվականին ինքնակամ կառուցված կիսանկուղը: Համայնքի կադաստրային քարտեզի, որակավորված անձի կողմից գծված շինությունների և հողամասի հատակագծերի, տեղում կատարված ուսումնասիրությունից պարզվեց, որ Ցոլիկ Ազնիվի Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի 9-րդ փողոց թիվ 13 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում 2016 թվականին ինքնակամ կառուցվել է 97.27 քմ մակերեսով կիսանկուղ:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9; 10; 11; 13 կետերի պահանջների, հիմք ընդունելով քաղաքացու դիմումը, որակավորված անձի կողմից գծված շինությունների և հողամասի հատակագծերը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ցոլիկ Ազնիվի Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի 9-րդ փողոց թիվ 13 հասցեի բնակավայրերի նշանակության հողամասում ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունը կառուցված չի ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չի քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Ցոլիկ Ազնիվի Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող 2016 թվականին կառուցված 97.27 քմ մակերեսով կիսանկուղը համարել օրինական:
2. Պարտավորեցնել քաղաքացի Ցոլիկ Ազնիվի Սահակյանին ինքնակամ կառուցված շինության համար համայնքային բյուջե 900105225214 հաշվեհամարին վճարել 191600 (մեկ հարյուր իննսուն մեկ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ:
3. Օրինականացման համար սահմանված վճարները 60 օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2021 թ. մայիսի 10
գ.Պտղնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 72

## ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերի պահանջների, հիմք ընդունելով ԱՁ «ԱՐՄԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԲԵՐՏԻ» կողմից ներկայացված հայտը՝ ***որոշում եմ.***

1. «ԱՐՄԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԲԵՐՏԻ» ԱՁ-ին տալ Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-1 թիվ 1 հասցեում գտնվող «Աղբյուր» հացատանը օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքիթույլտվություն 2021 թվականի 2-րդ եռամսյակի համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2021 թ. մայիսի 11
գ.Պտղնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 73

## ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ, ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N 843-Ն որոշման պահանջների, հիմք ընդունելով «ՎԻԼԼԱ ՀԻԼՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ *որոշում եմ.*

1. «ՎԻԼԼԱ ՀԻԼՍ» ՍՊԸ-ին տալ Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-1 այգեզանգված 1-ին թաղամաս թիվ 35 հասցեում գտնվող հանդիսությունների սրահում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի, համայնքայինկանոններինհամապատասխան, հանրայինսննդիկազմակերպմաննիրացման թույլտվություն 2021 թվականի 2-րդ եռամսյակի մայիսի 15-ից հունիսի 30-ը և 3-րդ եռամսյակի համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2021 թ. մայիսի 11
գ.Պտղնի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 74

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Էմիլ Սլավիկի Սարգսյանի դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն և Աստղիկ Ասատուրի Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-3 այգետարածք 4-րդ թաղամաս թիվ 32 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում (սեփականության վկայական N 2730755, ծածկագիր 07-054-0213-0011) 2018-2020 թվականներին ինքնակամ կառուցված բնակելի տունը, հարթակը, ծածկը, օժանդակ շինությունը, լողավազանը և պարիսպը: Համայնքի կադաստրային քարտեզի, որակավորված անձի կողմից գծված շինությունների և հողամասի հատակագծերի, տեղում կատարված ուսումնասիրությունից պարզվեց, որ Էմիլ Սլավիկի Սարգսյանին և Աստղիկ Ասատուրի ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-3 այգետարածք 4-րդ թաղամաս թիվ 32 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում 2018-2020 թվականներին ինքնակամ կառուցվել է 203.94 քմ մակերեսով բնակելի տուն, 50.2 քմ մակերեսով հարթակ, 45.3 քմ մակերեսով ծածկ, 5.2 քմ մակերեսով օժանդակ շինություն, 26.37 քմ մակերեսով լողավազան և 5.7 քմ մակերեսով պարիսպ:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9; 10; 11; 13 կետերի պահանջների, հիմք ընդունելով քաղաքացու դիմումը, որակավորված անձի կողմից գծված շինությունների և հողամասի հատակագծերը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-3 այգետարածք 4-րդ թաղամաս թիվ 32 հասցեի բնակավայրերի նշանակության հողամասում ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ ***որոշում եմ.***

1. Քաղաքացիներ Էմիլ Սլավիկի Սարգսյանին և Աստղիկ Ասատուրի Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող 2018-2020 թվականներին կառուցված 203.94 քմ մակերեսով բնակելի տունը, 50.2 քմ մակերեսով հարթակը, 45.3 քմ մակերեսով ծածկը, 5.2 քմ մակերեսով օժանդակ շինությունը, 26.37 քմ մակերեսով լողավազանը և 5.7 քմ մակերեսով պարիսպը համարել օրինական:
2. Պարտավորեցնել քաղաքացիներ Էմիլ Սլավիկի Սարգսյանին և Աստղիկ Ասատուրի Ղազարյանին ինքնակամ կառուցված շինությունների համար համայնքային բյուջե 900105225214 հաշվեհամարին վճարել 341200 (երեք հարյուր քառասուն մեկ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ և 133300 (մեկ հարյուր երեսուն երեք հազար երեք հարյուր) ՀՀ դրամ:
3. Օրինականացման համար սահմանված վճարները 60 օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2021 թ. մայիսի 12
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 75

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Վարուժան Վազգենի Դանիելյանի դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-2 այգետարածք 17-րդ թաղամաս թիվ 25 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում (սեփականության վկայական N 2120015, ծածկագիր 07-054-0118-0012) 2007-2011 թվականներին ինքնակամ կառուցված այգետնակը, օժանդակ շինությունները և պարիսպը: Համայնքի կադաստրային քարտեզի, որակավորված անձի կողմից գծված շինությունների և հողամասի հատակագծերի, տեղում կատարված ուսումնասիրությունից պարզվեց, որ Վարուժան Վազգենի Դանիելյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-2 այգետարածք 17-րդ թաղամաս թիվ 25 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում 2007-2011 թվականներին ինքնակամ կառուցվել է 164.9 քմ մակերեսով այգետնակ, օժանդակ շինություններ և 6.3 քմ մակերեսով պարիսպ:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9; 10; 11; 13 կետերի պահանջների, հիմք ընդունելով քաղաքացու դիմումը, որակավորված անձի կողմից գծված շինությունների և հողամասի հատակագծերը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ քաղաքացուն սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-2 այգետարածք 17-րդ թաղամաս թիվ 25 հասցեի բնակավայրերի նշանակության հողամասում ինքնակամ կառուցված կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Վարուժան Վազգենի Դանիելյանին սեփականության իրավունքով պատկանող 2007-2011 թվականներին կառուցված 164.9 քմ մակերեսով այգետնակը, օժանդակ շինությունները և 6.3 քմ մակերեսով պարիսպը համարել օրինական:
2. Պարտավորեցնել քաղաքացիներ Վարուժան Վազգենի Դանիելյանին ինքնակամ կառուցված շինությունների համար համայնքային բյուջե 900105225214 հաշվեհամարին վճարել 325000 (երեք հարյուր քսան հինգ հազար) ՀՀ դրամ և 7500 (յոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:
3. Օրինականացման համար սահմանված վճարները 60 օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2021 թ. մայիսի 14
գ.Պտղնի